

ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուրբաթ 4 Օգոստոսին, Ս. Էջմիածնի մատուռին մէջ, «Տապանակի Տօնին» նախաօրեակէն յետոյ, Պատրիարք Սրբազան Հայրը կիսասարկաւագի կարգին տրչուքիւնը կատարեց, խորտաւիակութեամբ Լուսարարապետ Տ. Նուրհան Նպս. Մանուկեանի եւ աղընքերակայութեամբ Աւետիս Արդ. Պուրնէժեանի եւ Տ. Բագրատ Արդ. Իփրէժեանի, ժառանգաւորաց վարժարանէն շրջանաւարտ եւ Ուրարակիր Յովնան Պաղտասարեանի եւ Վիրապ Պետրոսեանի ձախ բազուկին ուրարներ տեղաւորելով:

Իսկ Շաբաթ, 5 Օգոստոսի առաւօտուն, Ս. Էջմիածնի Մատուռին մէջ մատուցուած Ս. Պատարագի ընթացքին երկու կիսասարկաւագները ձեռնադրուեցան սարկաւագ, իշխանութիւն ստանալով նաեւ Ս. Պատարագի սկիիը վերաբերելու: Պատարագիչն էր Տ. Աւետիս Արդ. Իփրանեան, եւ Աւետարանի ընթերցումը կատարեց Վիրապ Արկ. Պետրոսեան, իսկ Ս. Սկիիի վերաբերումը կատարեց Յովնան Արկ. Պաղտասարեան:

- Նոյն Շաբաթ կէսօրէ ետք, յետ կիրակւորից ժամբարդութեան, կատարուեցաւ Բահանայական Կոչման կարգը, Ս. Աթոռոյս սարկաւագներէն Հայկ Գազազեանի, Արման Մինասեանի, Միսաֆ Յովհաննէսեանի, եւ Արմէն Հունտուրեանի:

Ընծայեալները, խորտաւիակութեամբ Լուսարարապետ Տ. Նուրհան Նպս. Մանուկեանի, աղընքերակայութեամբ Տ. Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեանի եւ Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեանի, եւ իւրաքանչիւր Ընծայեալի կողմէն կանգնած մէկ հոգեւորականով (Վանիկ Վրդ. Մանկասարեան, Աւետիս Արդ. Իփրանեան, Բագրատ Արդ. Պուրնէժեան, եւ Ընծանուէր

Արդ. Բաբախանեան), ծնրագնաց յառաջան Սրբոց Յակոբեանց Տանարի կեդրոնական դուռէն դէպի Աւագ Խորանի առնանը, ուր բազմած էր ձեռնադրիչ Թորգոմ Սրբազան Պատրիարք Հայրը:

Ընծայեալները ձեռնադրիչ Սրբազան Պատրիարքի հարցումներուն պատասխանելով նշուեցին Ուղղափառ եկեղեցւոյ կողմէ նշուեալ «չար աղանդներու հերձուածողները», յայտարարեցին «աշակերտիլ եւ հետեւիլ» Հայաստանայց եկեղեցւոյ Ուղղափառ դաւանութեան Սրբազան Հայրապետներուն, եւ միասնաբար արտասանեցին հաւատոյ հանգանակը Հայց. եկեղեցւոյ Ուղղափառ դաւանութեան:

Կիրակի 6 Օգոստ.- Տօն Այլակերպութեան: Ս. Պատարագի ընթացքին, Պատրիարք Սրբազան Հօր ձեռամբ, չորս Սարկաւագները ձեռնադրուեցան քահանայ:

Խորտաւիակն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Նպս. Մանուկեան, աղընքերականերէն էին Տ. Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեան եւ Տ. Պարէտ Մ. Վրդ. Նրէցեան:

Ձեռնադրութեան խորհուրդը կատարուեցաւ տպաւորիչ հանդիսաւորութեամբ: Ընծայեալները, ի նշան աշխարհէ հրաժարման, ձեռնաբարձ ժողովուրդին դառնալէ ետք, ձեռնադրութեան երկրորդ քաժնին մէջ ընդունեցին քահանայական զգեստաւորման օրհնութիւնը, տրչուքեան ուրոյն աղօթքներով: Օծման խորհրդաւորութեան նուիրական պահուն, Ձեռնադրիչ Պատրիարք Սրբազան Հայրը, Հայկ Սարկաւագ Գազազեանը անուանակոչեց «Տէր Նորայր»։ Արման Սարկաւագ Մինասեանը անուանակոչեց «Տէր Իսահակ»։ Միսաֆ Սարկաւագ Յովհաննէսեանը «Տէր Ղեւոնդ» եւ Արմէն Սարկաւագ Հունտուրեանը «Տէր Նաղ»:

Ապա ընծայեալները ստանալէ ետք իշխանութիւն մատուցանելու Ս. Պատարագ, իրենց անդրանիկ օրհնութիւնը տուին ժողովուրդին:

Պատրիարք Արքայան Հայրը իր
յորդորական խօսքին մէջ ըսաւ.
«Ուրախութեան եւ Ուխտի օր է այսօր,
Արքայ Յակոբեանց Միաբանութեան եւ
մեր ժողովուրդին համար»: Ըն յորդորեց
նորընծաներուն յանախ անդրադառնալ
իրենց ուխտառութեան այս օրուան, մնալով
միշտ «մշակ առանց ամօրոյ»:

«Ողջունի» պահում, Պատրիարք Սրբազան Հայրը եւ Հոգեւորական Հայրերը մօտեցան ի համրոյր նորընծաներուն նորած մակատին եւ աջին:

Պատարագի ատարին, եկեղեցւոյ
դասին մէջ, մինչ նորընծաները
գրականելու վրայ գետեղումած
Աւստրալաններու ընթերցումը կը կատարեն,
դպիրներ եւ ժողովուրդը աշահամբոյրի
մօտեցան:

- Կեսօրէ ետք, ժամերգութեան
աւարտին, նորած ընծայեալները
Պատրիարք Հօր ձեռամբ ստացան կուս-
կրօն քահանայի վեղարի օրհնութիւնը:

Իրիկնադէմին, Պարտիզաբաղի վարդապետաց մաշասարահին մէջ, միաբանութեան եւ աշակերտութեան մանակցութեամբ, տեղի ունեցաւ Միաբանական ընթրիք: Սղան բարի մաղթանքի խօսքեր, եւ Նորընծայ Տ.Նորայր Աթղ. Գազազեան, իր օծակից եղբայրներուն անունով, իրենց երախտագիտութիւնը, յայտնեց իրենց սրտած կրթութեան իմաստ, յատասնալով հաւատարմօրէն ծառայել Աստուծոյ եւ իրեն անդամներ Սրբոց Ծակոբեանց Միաբանութեան:

Նորընծաները իրենց «Ժառա-
սունքի» պատրաստության շրջանը պիտի
անցընեն Բեդեհեհեմի Ս. Մենդեան Տաճարին
կից Հայոց Վանգին մեջ:

ՎԱՆԻԿ ՎՐԻ. ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ

ԱՄՄԱՆԻ ԻԻԶՊԱՇԵԱՆ-ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ամմանի Իզգաաշեան-Կիւլպենկեան Նախակրթարանի եւ Մանկապարտէզի ամպլերշի հանդէսը տեղի ունեցաւ «Քերթա Սանթա» մշակութային կեդրոնի սրահին մէջ, նախագահութեամբ Վերատեսուչ Գեորգ. Տ. Վահան Արք. Թօփալեանի: Նախակրթարանը ունեցաւ 14 շրջանաւարտներ, որոնք նշխարացուցին յայտագիրը խմբերգներով, հայ եւ արաբ հեղինակներու բանաստեղծութեանց արտասանութիւններով, եւ իրենց սրտագոյն ելոյթներով, Հայերէն, Արաբերէն եւ Անգլերէն լեզուներով:

Նոյնպէս Մանկապարտեզի Մաղիկ դասարանի աշակերտները իրենց ելոյթներով եւ երգերով խանդավառեցին ներկայները: Իսկ վերջին բաժինին մէջ Նախակրթարանի աշակերտութեան

խմբագրվելու և հրատարակվելու համար հարկ է խնայել ժամանակը։

Ինչպես և արդեն հայտնի է, ՍՍՀՄ-ում 1989 թվականին իրականացվեցին ընդհանուր խմբագրական և հրատարակչական բարեփոխումներ։ Դրանից հետո հրատարակվեցին 1989 թվականի ընդհանուր խմբագրական և հրատարակչական բարեփոխումների մասին հրահանգները, որոնք սահմանում էին խմբագրական և հրատարակչական գործունեության ընդհանուր սկզբունքները, խմբագրական և հրատարակչական գործունեության կազմակերպության և ֆինանսավարման հարցերը։

Ինչպես և արդեն հայտնի է, ՍՍՀՄ-ում 1989 թվականին իրականացվեցին ընդհանուր խմբագրական և հրատարակչական բարեփոխումներ։ Դրանից հետո հրատարակվեցին 1989 թվականի ընդհանուր խմբագրական և հրատարակչական բարեփոխումների մասին հրահանգները, որոնք սահմանում էին խմբագրական և հրատարակչական գործունեության ընդհանուր սկզբունքները, խմբագրական և հրատարակչական գործունեության կազմակերպության և ֆինանսավարման հարցերը։

U. U.